ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

կիրառական ուղեցույց

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

կիրառական ուղեցույց

ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոն

Երևան, 2021

Այս ուղեցույցը ստեղծվել է **ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոնի** կողմից, ԴԱՏԱ գործընկերների հետ համագործակցությամբ, «ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագրի շրջանակներում, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ:

ԴԱՏԱ ծրագրի նպատակն է բարելավել ՔՀԿ-ների՝ տվյալներ հավաքագրելու, վերուծելու և դրանք քաղաքականություններ մշակողներին արդյունավետորեն հաղորդելու կարողությունը, ինչպես նաև խթանել միջոլորտային համագործակցությունը՝ ստեղծելով կապեր և ներգրավելով ՔՀԿ-ներին և Կառավարությանը փաստերով հիմնավորված քաղաքականությունների մշակման համագործակցության մեջ:

ԴԱՏԱ գործընկերներն են **Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, Բուն TV հիմնադրամը, Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ-ն և ՍՈՍԵ կանանց հիմնահարցեր ՀԿ-ն:**

Խմբագրակազմ
Հարություն Վերմիշյան
Հայկ Սմբատյան
Սրբուհի Միչիկյան
Լիլիթ Բաբայան

Ձևավորող
Մանե Արշալույսյան

Խմբագրակազմը հատուկ շնորհակալություն է հայտնում Լուսինե Խառատյանին, Սոնա Բալասանյանին, Էլինա Ասրիյանին, Ալինա Պողոսյանին և Եվգենյա Պատուրյանին ուղեցույցի բովանդակության բարելավման հարցում արժեքավոր ներդրման համար: Շնորհակալ ենք նաև Տատյանա Դարբինյանին և Արմինե Ղալամդարյանին ուղեցույցի մշակման աշխատանքներում ակտիվ մասնակցության համար:

Բոլոր հեղինակային իրավունքները պատկանում են ուղեցույցի հեղինակներին: Փաստաթուղթը կամ դրա առանձին մասերը վերատպելու դեպքում պարտադիր է պատշաճ կերպով հղում կատարելը:

Հղման նմուշ՝

ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոն, ԴԱՏԱ գործընկերներ. (2021). *Սոցիալական հետազոտության էթիկական ուղենիշներ. կիրառական ուղեցույց*. Երևան: «ԴԱՏԱ. տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» ծրագիր

ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոն
Էլ. փոստ՝ info@socies.am
Վեբկայք՝ socies.am

Սույն փաստաթուղթը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացան գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները և ներկայացված բովանդակությունը միմիայն դրանց հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

Այս ուղեցույցի առաքելությունը հետազոտահեն պրակտիկաների զարգացման համատեքստում հետազոտողի բարոյական կերպարի և մասնագիտական դիրքի ընդգծումն է: Այն կարող է օգտակար լինել Հայաստանում հետազոտահեն պրակտիկաներում ներգրավված պետական և ոչ պետական կառույցների, այդ թվում՝ համալսարանների, հիմնադրամների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, հետազոտական կենտրոնների, ինչպես նաև քաղաքականություն մշակողների և իրականացնողների, փորձագետների, անկախ հետազոտողների և ուսանողների համար:

Ուղեցույցը նպատակ ունի ընդգծելու հետազոտական էթիկայի պահպանման ամենահիմնական և համընդհանուր սկզբունքները և լավագույնս կարող է ծառայել որպես էթիկական գործելակերպի ***էլակետ***: Այն նպատակ չի հետապնդում դառնալու էթիկայի պահպանման համընդգրկուն և ամփոփ ձեռնարկ, հետևաբար՝ խմբագրակազմը խրախուսում է չսահմանափակվել այս ուղեցույցում ներառված տեղեկատվությամբ և օգտվել նաև հավելյալ աղբյուրներից՝ կախված իրականացվելիք ուսումնասիրության մեթոդաբանական, թեմատիկ կամ տեխնիկական յուրահատկություններից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

5 **Հասկացությունների բառարան**

7 **Առաջաբանի փոխարեն**

10 **Մաս 1. Հետազոտական էթիկայի սկզբունքներն ու ընթացակարգերը**

11 1. Հետազոտության նախագծման փուլ

13 2. Հետազոտության իրականացման փուլ

16 3. Հետազոտական արդյունքների մշակման և վերլուծության փուլ

17 4. Հետազոտության արդյունքների ներկայացման/ հաղորդակցման փուլ

18 **Մաս 2. Օգտակար ռեսուրսներ**

19 1. Հետազոտական էթիկա

21 2. Հետազոտություն, փուլեր, ընթացակարգեր

23 **Հավելված 1. Հետազոտական էթիկան ոչ ստանդարտ իրավիճակներում**

24 **Հավելված 2. Տեղեկացված համաձայնության թերթիկի նմուշ**

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Այս բաժնում ներկայացված են ուղեցույցում հաճախ հանդիպող հասկացություններն ու մասնագիտական եզրույթները և դրանց՝ խմբագրակազմի կողմից տրված սահմանումները:

Հետազոտող	հետազոտական հմտություններին տիրապետող մասնագետ՝ ընդգրկված հետազոտությունների նախագծման, դաշտային աշխատանքների իրականացման, տվյալների մշակման և վերլուծության գործընթացներում:
Հետազոտվող, հետազոտության մասնակից	հետազոտության նպատակներից բխող անմիջական և/կամ միջնորդավորված տեղեկատվություն տրամադրող անհատ, խումբ կամ կազմակերպություն:
Շահագրգիռ խմբեր/կողմեր	հետազոտության իրականացման գործընթացներին և հետազոտական արդյունքներին առնչվող, որոշակի շահ կամ հետաքրքրություններ ունեցող անհատներ և հաստատություններ, որոնք կարող են տարբերվել՝ ըստ հետազոտության շրջանակներում իրենց ներդրման և ներգրավվածության աստիճանի:
Մասնագիտական համայնք	հետազոտողների ցանց, որոնք ինքնակազմակերպվում են հետազոտական էթիկայի համընդհանուր սկզբունքների և ընթացակարգերի շուրջ:
Հետազոտության օբյեկտ	հետազոտական հիմնախնդիրը կրող անհատների կամ նյութերի խումբ, որից հետազոտողն անմիջականորեն կամ միջնորդավորված տեղեկատվություն է հավաքագրում:
Մեթոդաբանություն	հետազոտության ընդհանուր տրամաբանությունը և ռազմավարությունը սահմանող, ակադեմիական կամ կիրառական սկզբունքներով հիմնավորված մոտեցում:
Մեթոդ	կոնկրետ գործիքակազմերի, տեխնիկաների և ընթացակարգերի ամբողջություն՝ որոշակի սահմանված կերպով տվյալներ հավաքագրելու համար:
Ընտրանք	հետազոտության օբյեկտի միավորների ամբողջական համախմբից նախապես սահմանված սկզբունքով կազմվող միավորների խումբ, որից հետազոտողն անմիջականորեն տեղեկատվություն է հավաքագրում հետազոտության օբյեկտի մասին:
Տեղեկատվական նյութ	հետազոտության համար նշանակալի տեղեկատվություն պարունակող փաստաթղթեր, անձնական կամ արխիվային նյութեր և այլ տեղեկատվական կրիչներ:
«Հում» տվյալ	դաշտային աշխատանքների փուլում հավաքագրված, դեռևս չմշակված և չվերլուծված տեղեկատվություն:

Նույնականացման տվյալներ	հետազոտության մասնակցի ինքնությունը բացահայտող տվյալներ, այդ թվում՝ անուն, կոնտակտային տվյալներ, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսանկարներ և այլն:
Գաղտնի (կոնֆիդենցիալ) տվյալ	տվյալ, որը հայտնի է միայն հետազոտողին և հանրայնացման ենթակա չէ:
Անանուն հետազոտություն	հետազոտություն, որի շրջանակներում տեղեկատվությունը տրամադրողի անձը նույնականացնող տվյալները չեն հրապարակվում:
Հետազոտության նախագծում	հետազոտության իրականացման մեկնարկային փուլ, որում սահմանվում է հետազոտության նպատակը, մշակվում են դրա մեթոդաբանությունը, մեթոդները և տվյալների հավաքագրման գործիքակազմը, սահմանվում են հետազոտության օբյեկտը և ընտրանքը, ինչպես նաև հաշվի են առնվում մի շարք տեխնիկական նկատառումներ (օր.՝ ժամանակ, ռեսուրսներ, նյութերի հասանելիություն և այլն): Այս փուլը, ըստ էության, նախանշում է հետազոտության ընթացքը:
Տվյալների հավաքագրում, դաշտային աշխատանքներ	հետազոտության իրականացման փուլ, որում հետազոտողը նախապես մշակված մեթոդաբանության շրջանակներում հետազոտության օբյեկտի միավորներից համակարգված կերպով հավաքում է անհրաժեշտ տեղեկատվությունը: Այս փուլի ավարտին կուտակվում են հետազոտության «հում» տվյալները:
Տվյալների մշակում և վերլուծություն	հետազոտության իրականացման փուլ, որում արդեն ստացված «հում» տվյալները ենթարկվում են տեխնիկական և բովանդակային ստուգումների, համակարգվում և պահպանվում են մեկ ընդհանուր առցանց կամ առձեռն շտեմարանում, և նախապես ընտրված մեթոդաբանության շրջանակներում ենթարկվում են վերլուծության: Այս փուլի ավարտին ձևակերպվում են հետազոտության հիմնական բացահայտումներն ու եզրահանգումները:
Հետազոտության արդյունքների ներկայացում/ հաղորդակցում	հետազոտության եզրափակիչ փուլ, որում հետազոտության արդյունքներն ամփոփվում են վերլուծական զեկույցի, հաշվետվության, առաջարկությունների փաթեթի, ձեռնարկի, հոդվածի կամ այլ փաստաթղթերի տեսքով: Այնուհետև, դրանք, ըստ անհրաժեշտության, հաղորդակցվում են հետազոտության շահառու խմբերի հետ՝ փակ կամ բաց ձևաչափով, բանավոր կամ գրավոր ձևով:
Հուսալիություն	հետազոտության որակական ցուցիչ, ըստ որի՝ հետազոտությունն ամբողջությամբ կրկնելու դեպքում ստացված արդյունքները կլինեն նույնական:
Վավերականություն	որակական ցուցիչ, ըստ որի՝ կիրառված մեթոդը չափում է այն, ինչ նպատակադրված է չափել:
Տրիանգուլյացիա	տվյալների հուսալիության ստուգման տեխնիկա, որը ենթադրում է խնդրի ուսումնասիրություն միևնույն հետազոտողի կողմից տարբեր մեթոդներով կամ տարբեր հետազոտողների կողմից միևնույն մեթոդով:

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հետազոտական էթիկան հետազոտական գործունեության բարոյական սկզբունքների և ընթացակարգերի ամբողջությունն է, որն ուղղված է հետազոտության նախագծման, տվյալների հավաքագրման, հետազոտական արդյունքների մշակման և վերլուծության, արդյունքների ներկայացման և հաղորդակցման գործընթացների պատշաճ կազմակերպմանը:

Հետազոտական էթիկայի ուղենիշների մշակման նպատակն է նպաստել.

- հետազոտության ընթացակարգային հիմնավորվածությանը և գրագիտությանը,
- հետազոտության անմիջական մասնակիցների ֆիզիկական, սոցիալական և հոգեբանական պաշտպանվածությանը,
- հետազոտական տվյալների թափանցիկությանն ու անվտանգությանը,
- շահագիգռ խմբերի շահերի պաշտպանությանը:

Սոցիալական հետազոտությունները նման են բժշկությանը այն առումով, որ երկուսի առանցքում էլ ընկած է միևնույն կենտրոնական սկզբունքը՝ «**մի՛ վնասիր**»: Ընդ որում՝ սոցիալական հետազոտությունների դեպքում չվնասելու սկզբունքը բավականին ընդգրկուն հասկացություն է և ներառում է առնվազն հետևյալը.

1. Չվնասել ֆիզիկապես

Հետազոտություններ անելիս մենք հաճախ աշխատում ենք մարդկանց, փաստաթղթերի, անձնական կամ արխիվային նյութերի և տեղեկատվություն պարունակող այլ օբյեկտների հետ: Պետք է հիշել, որ հետազոտությանն առնչվող մարդկանց կամ նյութերին մտադրված ֆիզիկական վնաս հասցնելը թե՛ իրավական, թե՛ էթիկական նորմերի կոպիտ խախտում է:

2. Չվնասել հոգեբանորեն և սոցիալապես

Հետազոտողները շատ հաճախ զրուցում են մարդկանց հետ հետազոտության թեմային առնչվող տեղեկատվություն ստանալու նպատակով: Հետազոտության թեմաները հաճախ վերաբերում են մարդկանց անձնական կյանքին, փորձառությանը, նրանց ընկալումներին և դիրքորոշումներին, և երբեմն մենք ստիպված ենք լինում մարդկանց հետ շատ զգայուն և խոցելի խնդիրներ քննարկել: Հետազոտության թեմայից անկախ՝ որոշ դեպքերում հետազոտության մասնակիցները հենց խոցելի խմբերի ներկայացուցիչներ են լինում, օրինակ՝ երեխաներ, միգրանտներ, պատերազմ կամ այլ աղետալի իրադարձություն վերապրածներ: Խիստ կարևոր է, որ մեր վարած զրույցների ընթացքում կամ դրանց արդյունքում մենք հոգեսոցիալական վնասներ չհասցնենք հետազոտության մասնակիցներին:

3. Չվնասել մասնագիտորեն

Հետազոտությունների ոլորտը կարևոր և լրջագույն մասնագիտական դաշտ է և պահանջում է պատասխանատվություն ոչ միայն հետազոտության մասնակիցների, այլև բուն դաշտի նկատմամբ: Բարեխիղճ հետազոտողը պետք է իր գործն այնպես իրականացնի, որ այդ հետազոտությունից հետո նույն դաշտում այլ հետազոտողներ ևս կարողանան առանց խոչընդոտների աշխատել: Կարևոր է, որ հետազոտողը անձնական պատասխանատվություն վերցնի մասնագիտական համայնքի առջև, մասնավորապես՝ պահպանի հեղինակային իրավունքները, ապահովի հետազոտության ընթացակարգի թափանցիկությունը, չկեղծի և չնենգափոխի տվյալները, չզբաղվի գաղափարական քարոզչությամբ և չդիմի այնպիսի գործողությունների, որոնք կարող են այս կամ այն կերպ վնասել հետազոտական համայնքի հեղինակությանը:

4. Չվնասել ինքն իրեն

Երբեմն հետազոտողները կարող են նաև հայտնվել այնպիսի իրավիճակներում, երբ հետազոտության նպատակի իրականացումը հետազոտողին վնասելու ռիսկ է պարունա-

կում: Պետք է հիշել, որ հետազոտողի ֆիզիկական և հոգեբանական անվտանգության ապահովումը նույնքան կարևոր է, և բոլոր այն դեպքերում, երբ կա ֆիզիկական, հոգեբանական, սոցիալական կամ մասնագիտական վնաս կրելու վտանգ, անհրաժեշտ է վերանայել հետազոտության ռազմավարությունը կամ ծայրահեղ դեպքում առհասարակ դադարեցնել այն:

Այս սկզբունքներն առաջին հայացքից կարող են չափազանց պարզունակ թվալ, սակայն հետազոտողները հաճախ նույնիսկ չեն նկատում, որ վնաս են հասցնում: Կարևոր է այս սկզբունքները մտապահել և պարբերաբար վերհիշել հետազոտություններ իրականացնելիս, քանի որ էթիկական սկզբունքների խախտումները կարող են հանգեցնել մի շարք հետևանքների, այդ թվում՝

- հանրության շրջանում մասնագիտության նկատմամբ վստահության և հարգանքի կորուստ,
- հետազոտության արդյունքների խեղաթյուրում,
- մասնագիտական դաշտում ֆինանսական հոսքերի կրճատում,
- մասնագիտական հավատարմագրությունից զրկում,
- երբեմն մինչև դատական պատասխանատվություն:

Հիշե՛ք.

եթե կարծում եք, որ հետազոտության որևէ փուլում թվարկված վնասներից թեկուզ մեկն ակնհայտորեն անխուսափելի է, անհրաժեշտ է անմիջապես դադարեցնել հետազոտությունը: Հետազոտության թերությունները շտկելու կամ այն վերանայելու տարբերակներ միշտ էլ կգտնվեն, սակայն մարդկանց կամ նյութերին հասցված վնասները հաճախ անշրջելի կարող են լինել:

Այսպիսով, սույն ուղեցույցի առաջին մասում քննարկվում են հետազոտական էթիկայի սկզբունքները՝ ըստ հետազոտության իրականացման չորս փուլերի: Սկզբունքներից զատ, առանձնացվում են նաև դրանց պահպանմանն ուղղված որոշ ընթացակարգեր: Ուղեցույցի երկրորդ մասում ներկայացված են հետազոտական էթիկային և հետազոտության իրականացման տարբեր ասպեկտներին վերաբերող մի շարք օգտակար ռեսուրսներ:

ՄԱՍ 1. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Սոցիալական հետազոտությունները, անկախ դրանց նպատակից և մեթոդաբանությունից, իրականացվում են չորս հիմնական փուլերով՝ նախագծում, տվյալների հավաքագրում, մշակում և վերլուծություն, ներկայացում *(տես Հասկացությունների բառարան)*:

Այս բոլոր փուլերում հետազոտողը կարող է կանգնել տարբեր էթիկական խնդիրների և երկընտրանքների առջև: Ուղեցույցի հաջորդ ենթաբաժիններում քննարկվում են հետազոտական էթիկայի սկզբունքները և որոշ ընթացակարգեր՝ ըստ հետազոտության իրականացման փուլերի:

1. Հետազոտության նախագծման փուլ

Սկզբունքներ

Հետևողականություն և պատասխանատվություն.

- Պահպանել և հիմնավորել հետազոտության նախագծման սկզբունքներն ու մեթոդական ընթացակարգերը:
- Հետազոտությունը նախագծելիս օգտվել առկա մասնագիտական գրականությունից, մեթոդական ձեռնարկներից և անհրաժեշտության դեպքում խորհրդակցել հետազոտող-մասնագետների հետ:

Ինչու.

սա կօգնի հիմնավորել հետազոտության անհրաժեշտությունը, առավել հստակորեն սահմանել հետազոտության նպատակն ու խուսափել անիմաստ կրկնություններից կամ արդեն բացահայտված ճշմարտությունների վերարտադրությունից:

- Հետազոտությունը սկսելուց առաջ համոզվել՝ որքանով է հիմնախնդիրն արդիական, և արդյոք ձեզ հետաքրքրող տեսանկյունից արդեն ուսումնասիրված չէ: Եթե այն արդեն ուսումնասիրված է, սակայն կարծում եք, որ նոր ասելիք ունեք, անհրաժեշտ է նախկինում արված հետազոտությունները քննարկել՝ մատնանշելով, թե դրանց շարքն ինչպես եք համալրելու:
- Չառաջնորդվել հարմարության և կամայականության սկզբունքով, այսինքն՝ հետազոտության հետ կապված որոշումները չկառուցել անձնական նախընտրությունների վրա:
- Խուսափել հետևյալ կանխադրույթներից.
  - «առանց հետազոտության էլ խնդիրը պարզ է»,
  - «հետազոտության արդյունքները նախապես կանխորոշված են»,
  - «յուրաքանչյուր անհատ էլ կարող է հետազոտություն անել»:

Ինչու.

այս կանխադրույթները նվազեցնում են հետազոտության իրական արժեքը և տանում են դեպի փակուղի:

Անկողմնակալություն.

- Հիմնախնդրի սահմանման և իրավիճակների նկարագրության ընթացքում պահպանել հետազոտական չեզոքություն: Այսինքն՝ հետազոտության հիմքերը սահմանելիս խուսափել արժեքային համոզմունքներից և «ճիշտ աշխարհի» մասին պատկերացումներից:

Ինչո՞ւ.

եթե վստահ եք, որ գիտեք, թե ինչպիսին պիտի լինի աշխարհը, հարց է առաջանում՝ ինչի՞ համար անել հետազոտություն:

Ընթացակարգեր

- Հետազոտական ծրագրի/պլանի մշակում;
- Կոնցեպտուալ և/կամ օպերացիոնալ սխեմաների մշակում;
- Գործիքների տեղայնացում, վավերականության և հուսալիության ստուգում:

Տես նաև «Օգտակար ռեսուրսներ» բաժնում

2. Հետազոտության իրականացման փուլ

Սկզբունքներ

Հետևողականություն.

- Պահպանել մեթոդ/ների կիրառման ընթացակարգային պահանջները:
- Հետևել նախապես մշակված հետազոտական պլանին, իսկ անհրաժեշտ փոփոխությունների/շտկումների դեպքում դրանց հիմնավորումը հստակ արձանագրել հետազոտության արդյունքների ներկայացման փուլում:

Ազնվություն.

- Չկեղծել տվյալները:
- Հետազոտվողներին մանրամասն իրազեկել հետազոտության նպատակի, տվյալների անվտանգության, կիրառելիության վերաբերյալ:
- Հետազոտության մասնակիցներին իրազեկել հնարավոր իրավական/բարոյական խնդիրների/ռիսկերի վերաբերյալ:

Ներառականություն.

- Հնարավորություն ընձեռել յուրաքանչյուր մասնակցի և/կամ շահագրգիռ կողմի ազատ և անկաշկանդ արտահայտվելու:

Անհատակենտրոնություն.

- Տվյալների հավաքագրումը չսկսել առանց հետազոտվողների նախնական համաձայնության[1]:
- Հարգել հետազոտության մասնակիցների իրավունքները, արժեքները, պատկերացումները:
- Հետազոտության մասնակիցների հետ հաղորդակցվելիս
  - լինել նրբանկատ, համբերատար և պատրաստակամ,
  - չլինել պահանջկոտ, իշխող և կտրուկ:

Անանունություն և/կամ գաղտնիություն.

- Հնարավորության դեպքում կիրառել տվյալների անանունությունը պահպանող տեխնիկաներ:
- Անանունությունը պահպանելու հնարավորությունների բացակայության դեպքում ապահովել ստացված տվյալների գաղտնիությունը:

Անվտանգություն.

- Խուսափել իրավական տեսանկյունից խնդրահարույց տեղեկատվության հավաքագրումից:

1. Հետազոտությանը մասնակցությունը պետք է լինի կամավոր:

Ինչո՞ւ.

նմանօրինակ տեղեկատվության ստացումը կարող է հետազոտողին դնել էթիկական լուրջ երկընտրանքի առջև, որում նա, օրինակ, ստիպված է ընտրել հետազոտվողի անձի գաղտնիությունը պահպանելու և քրեորեն պատժելի արարքի մասին ծանուցելու միջև:

- Չկիրառել այնպիսի տեխնիկաներ և/կամ ընթացակարգեր, որոնք կարող են հետազոտության մասնակիցներին ֆիզիկական, սոցիալ-տնտեսական և/կամ հոգեբանական վնաս պատճառել:
- Հաշվի առնել հետազոտության մասնակիցների սոցիալ-մշակութային առանձնահատկությունները:

Արդարություն.

- Արդար վարձատրել հետազոտողներին (ներառյալ դաշտային աշխատանքներում ներգրավված անհատներին)՝ կիրառելով վարձատրության և խրախուսման ընդունելի ֆորմալ և ոչ ֆորմալ ընթացակարգեր:
- Հնարավորության դեպքում խրախուսական նվեր տալ հետազոտության մասնակիցներին՝ որպես շնորհակալություն նրանց ժամանակի և տրամադրած տեղեկատվության համար:

Բարեխղճություն և սոցիալական պատասխանատվություն.

- Հետազոտական դաշտը լքել՝ չխաթարելով հետազոտության մասնակիցների սկզբնական միջավայրը:
- Դաշտային աշխատանքների իրականացմամբ չխոչընդոտել հետագա հետազոտողների մուտքը դաշտ և/կամ չխաթարել հետազոտողի հեղինակությունը:

ο Ընթացակարգեր

- Անանունությունը պահպանող գործիքների մշակում:
- Հետազոտողների վերապատրաստում և վերահսկողություն:
- Զգայուն թեմաների դեպքում իրավական և/կամ հոգեբանական խորհրդատվություն:
- Հետազոտությունն իրականացնողների հետ աշխատանքային հարաբերությունների մշակում՝ համաձայն գործող աշխատանքային օրենսգրքի, կամավորական գործունեությունը կարգավորող իրավական և/կամ ծրագրային սկզբունքների:
- Համաձայնության թերթիկի (Informed consent form) մշակում[2], որը պետք է ներառի.
    - Տեղեկատվություն հետևյալի շուրջ.
        - ուսումնասիրության նպատակ և հետազոտության կանխատեսվող հետևանքներ,

2. Համաձայնության թերթիկի կիրառումը հատկապես պարտադիր է, եթե գործ ունենք խոցելի խմբերի, երեխաների կամ զգայուն թեմաներով հետազոտության մասնակիցների հետ:

  - ֆինանսավորողների և հովանավորների ինքնություն,
  - արդյունքների հետագա կիրառություն,
  - ուսումնասիրության հնարավոր օգուտներ և հնարավոր վնաս կամ անհանգստություն,
  - տվյալների պահպանման և անվտանգության հետ կապված հարցեր,
  - անանունության և գաղտնիության աստիճան:
- Ձայնագրությունների և/կամ այլ տեխնիկական միջոցների կիրառության թույլտվություն:

Տես նաև «Օգտակար ռեսուրսներ» բաժնում

3. Հետազոտական արդյունքների մշակման և վերլուծության փուլ

Սկզբունքներ

Անանունություն և գաղտնիություն.

- Պահպանել անանունությունը երաշխավորող տեխնիկական ընթացակարգերը:
- Ուղիղ խոսքի մեջբերումներ անելիս դրանցում չկիրառել անձնական տվյալներ, որոնց միջոցով հնարավոր է նույնականացնել հետազոտության մասնակցին:
- Չհրապարակել անձնական տվյալներ պարունակող հետազոտական արդյունքներ[3]:

Թափանցիկություն.

- Հետազոտության նախագծման և/կամ դաշտային աշխատանքների իրականացման սահմանափակումների/սխալների արդյունքում ծագած, այդ թվում՝ տվյալների հուսալիության և վավերականության խնդիրները չթաքցնել հետազոտության շահագրգիռ կողմերից:
- Այլ հետազոտողների և հետազոտության շահագրգիռ կողմերի համար ապահովել հետազոտական անանուն «հում» տվյալների, վերլուծական սխեմաների և ընթացակարգերի հասանելիություն, եթե չկան հակառակը պարտադրող հանգամանքներ (օր.՝ ֆինանսավորողի համապատասխան պահանջ):

Քննադատականություն.

- Ստուգել հետազոտության տվյալների հուսալիությունը՝ կիրառելով հուսալիության բարձրացման տեխնիկաներ (տես «Օգտակար ռեսուրսներ», 2-րդ բաժին):
- Հատկապես որակական տվյալների դեպքում կիրառել տրիանգուլյացիայի տեխնիկան:

Ազնվություն.

- Հղում անել հետազոտության տվյալների, բազաների սկզբնաղբյուրներին՝ հիշատակելով ֆինանսավորման աղբյուրներին ու աջակիցներին:
- Չկեղծել հետազոտության արդյունքները:
- Պահպանել մեջբերումների և/կամ հղումների կանոնները:

Ընթացակարգեր

- Գործիքների, մեթոդաբանական ընթացակարգերի, հետազոտական տվյալների շտեմարանների արխիվացում և արխիվների տեղեկատվական անվտանգության ապահովում:
- Հետազոտվողներին նույնականացնող տեղեկատվության կոդավորում:

Տես նաև «Օգտակար ռեսուրսներ» բաժնում

3. Երբեմն թույլատրվում է նյութը հրապարակել հետազոտվողի անուն-ազգանունով, սակայն միայն վերջինիս գրավոր համաձայնության պարագայում:

4. Հետազոտության արդյունքների ներկայացման/հաղորդակցման փուլ

Սկզբունքներ

Անանունություն և/կամ գաղտնիություն.

- Անձական տեղեկատվությունը ներկայացնել միայն նախնական համաձայնությամբ՝ նախապես քննարկելով, թե ինչը և ինչ չափով կարելի է հրապարակել:
- Հետազոտության «հում» տվյալները հրապարակելու պարագայում վստահ լինել, որ դրանցում չեն պարունակվում նույնականացման տվյալներ (օր.՝ անուններ, կոնտակտային տվյալներ պարունակող տեքստեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսանկարներ և այլն): Ծայրահեղ անհրաժեշտության դեպքում նախապես ստանալ հետազոտվողի գրավոր համաձայնությունը կամ հրապարակվող տվյալներից չեզոքացնել նույնականացման հավանականությունը:

Թափանցիկություն և հաշվետվողականություն.

- Ազնվորեն նկարագրել ընտրված մեթոդաբանությունը, վերջինիս սահմանափակումները, ինչպես նաև իրականացումը, ներառյալ՝ դրա ընթացքում ծագած խնդիրները:
- Հրապարակել հասարակական նշանակալի տվյալները և ապահովել հետազոտության մեթոդաբանության, գործիքների և տվյալների անանունացված շտեմարանների հասանելիությունը, եթե չկան հակառակը պարտադրող հանգամանքներ:

Ընթացակարգեր

- Դոնորների հետ հետազոտության արդյունքների հետագա տարածման, թափանցիկության և հասանելիության վերաբերյալ նախնական համաձայնագրի մշակում:
- Դոնորներին և/կամ այլ շահագրգիռ խմբերին տվյալների տրամադրում:

Տես նաև «Օգտակար ռեսուրսներ» բաժնում

ՄԱՍ 2.
ՕԳՏԱԿԱՐ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Այս բաժնում ներառված են մի շարք հավելյալ ռեսուրսներ, այդ թվում՝ հետազոտական էթիկային և առհասարակ հետազոտություններին, դրանց փուլերին և ընթացակարգերին վերաբերող գրքեր, հոդվածներ, հրապարակումներ և այլ փաստաթղթեր: Սրանք կարող են օգտակար լինել ուղեցույցում քննարկված սկզբունքներին և ընթացակարգերին առավել հանգամանալից ծանոթանալու և դրանք էլ ավելի կիրառական դարձնելու նպատակով:

Ռեսուրսների ցանկը կազմվել է հանրությանը հասանելի մի շարք աղբյուրներից: Այն բնականաբար ամբողջական չէ, սակայն հիմնարար գիտելիքներ կուտակելու և առկա գիտելիքները կոնկրետ ուղղությամբ խորացնելու տեսանկյունից կարող է շատ արժեքավոր լինել:

1. Հետազոտական էթիկա

Կազմակերպությունների/ասոցիացիաների ուղեցույցներ, կոդեքսներ

1. American Sociological Association: Code of Ethics
2. Social Research Association: Research Ethics Guidance (2021)
3. Social Research Association: Ethical Guidelines (2003)
4. Oral History Association: Statement on Ethics
5. American Anthropological Association: Principles of Professional Responsibility
6. American Anthropological Association: Code of Ethics
7. Ethics in Social Science and Humanities (European Commission, October 2018)
8. British Sociological Association: Statement of Ethical Practice
9. Open Data and Democratic Governance: Policies, Platforms and Practices (British Sociological Association)
10. Ethics Guidelines and Collated Resources for Digital Research (British Sociological Association)
11. Ethical Guidelines for Good Research Practice. ASA
12. Standards and Operational Guidance for Ethics Review of Health-Related Research with Human Participants
13. Code of Human Research Ethics. The British Psychological Society
14. Code of Ethics and Conduct. The British Psychological Society
15. Code of conduct social science research UNESCO, Paul de Guchteneire
16. Ethics best practice guidance on conducting research with human participants during Covid-19. BPS
17. IVSA Code of Research Ethics and Guidelines (2009) Diana Papademas & the International Visual Sociology Association, Visual Studies, 24:3, 250-257

Գրքեր

1. Earl Babbie (2010) The Practice of Social Research, Wadsworth
2. Rose Wiles (2014) What are Qualitative Research Ethics?
3. Paul Oliver (2003) The Students' Guide to Research Ethics
4. Donna M. Mertens, Pauline E. Ginsberg (2009) The Handbook of Social Research Ethics
5. Mark Israel, Iain Hay (2006) Research Ethics for Social Scientists
6. David B. Resnik (2018) The Ethics of Research with Human Subjects: Protecting People, Advancing Science, Promoting Trust, Springer International Publishing

7. Ron Iphofen (2009) Ethical Decision Making in Social Research: A Practical Guide
8. Martyn Hammersley, Anna Traianou (2012) Ethics in Qualitative Research: Controversies and Contexts
9. Dr Melanie Mauthner, Maxine Birch, Julie Jessop, Tina Miller (2002) Ethics in Qualitative Research
10. Isabella Paoletti, Maria Isabel Tomas, Fernanda Menendez (Eds.) (2013) Practices of Ethics: An Empirical Approach to Ethics in Social Sciences Research
11. Ethics and Social Research, S. Ali and M. Kelly (Chapter 5 in Researching Society and Culture, 2004)
12. Sana Loue (2000) Textbook of Research Ethics: Theory and Practice
13. Joan Cassell (auth.), Joan E. Sieber (eds.) (1982) The Ethics of Social Research: Fieldwork, Regulation, and Publication, Springer-Verlag New York
14. Priscilla Alderson & Virginia Morrow (2020) The Ethics of Research with Children and Young People: A Practical Handbook
15. Farina Madita Dobrick, Jana Fischer, Lutz M. Hagen (eds.) (2018) Research Ethics in the Digital Age: Ethics for the Social Sciences and Humanities in Times of Mediatization and Digitization
16. Ethical Conduct for Research Involving Humans, 2018
17. The Ethics of Social Research, Chapter 4
18. Protecting Participants and Facilitating Social and Behavioral Sciences Research (2003) Surveys, and Social Science Research Panel on Institutional Review Boards, National Research Council

Ձեռնարկներ

1. Research Ethics Handbook: Philosophy, History and Theory, Brunel University London
2. Research Ethics Code and Procedures (The University of Northampton)
3. Guidelines for Research Ethics in The Social Sciences, Law and The Humanities
4. Schenk, Katie D. and Jan Williamson. (2005) “Ethical Approaches to Gathering Information from Children and Adolescents in International Settings: Guidelines and Resources.” Washington, DC: Population Council
5. Этические принципы при проведении научно-исследовательских работ и публикации результатов

Հոդվածներ

1. Dooly M., Moore E. and Vallejo C. (2017) Research ethics
2. Žydžiūnaitė Vilma (2018) Implementing Ethical Principles in Social Research: Challenges, Possibilities And Limitations
3. Palys, T., & Lowman, J. (2000). Ethical and Legal Strategies for Protecting Confidential Research Information. . Canadian Journal of Law and Society, 15(01), 39–80
4. Crow, G., Wiles, R., Heath, S., & Charles, V. (2006). Research Ethics and Data Quality: The Implications of Informed Consent. International Journal of Social Research

Methodology, 9(2), 83–95.
5. Wolff-Michael Roth & Hella von Unger (2018) Current Perspectives on Research Ethics in Qualitative Research, Forum Qualitative Sozialforschung / Forum: Qualitative Social Research, 19 (3), Art. 33
6. Ross, L. F., Loup, A., Nelson, R. M., Botkin, J. R., Kost, R., Smith, G. R., & Gehlert, S. (2010). Human Subjects Protections in Community-Engaged Research: A Research Ethics Framework. Journal of Empirical Research on Human Research Ethics, 5(1), 5–17
7. Gloria González-López (2011) Mindful Ethics: Comments on Informant-Centered Practices in Sociological Research
8. Н.В. Веселкова (2000) Об Этике Исследования

Կայքեր

1. The Research Ethics Guidebook: a resource for social scientists
2. Research Ethics: A Handbook of Principles and Procedures
3. Data protection policy
4. Ethics Education Library

2. Հետազոտություն, փուլեր, ընթացակարգեր

Գրքեր

1. Norman K. Denzin, Yvonna S. Lincoln (2017) The SAGE Handbook of Qualitative Research
2. Research Design Qualitative, Quantitative, Mixed Methods Approaches_Creswell_2nd ed.
3. John W. Creswell & Cheryl N. Poth (2018) Qualitative Inquiry and Research Design: Choosing Among Five Approaches, 4th Edition
4. Applied Social Research, 10th Edition: A Tool for the Human Services (2019) Hilton, Timothy P., PhD, MSW, Fawson, Peter R., PhD, MSW, Sullivan, Thomas J., PhD, MA, DeJong, Cornell R., MSW
5. Catherine, Dr. Dawson (2009) Introduction to Research Methods: A Practical Guide for Anyone Undertaking a Research Project
6. Ranjit Kumar (2010) Research Methodology: A Step-by-Step Guide for Beginners
7. David Coghlan, Mary Brydon-Miller (2014) The SAGE Encyclopedia of Action Research
8. Social Research Methods, 4th Edition (2012) Alan Bryman
9. D. C. Miller, N. J. Salkind (2002) Handbook of Research Design and Social Measurement 6th Edition

10. The SAGE Handbook of Social Research Methods (2008) Edited by: Pertti Alasuutari, Leonard Bickman & Julia Brannen
11. The Sage Handbook of Applied Social Research Methods (1998) Leonard Bickman, Debra J. Rog
12. Case Study Research and Applications. Design and Methods, 6th ed. Robert K. Yin, D. T. Campbell
13. Practical Research Methods A user-friendly guide to mastering research techniques and projects DR CATHERINE DAWSON
14. Gloria E. Bader, Catherine A. Rossi (2002) Focus Groups: A Step-By-Step Guide (3rd Edition)
15. Dr. Paul J. Lavrakas (2008) Encyclopedia of Survey Research Methods (2 Volume Set)
16. Larry B. Christensen, R. Burke Johnson, Lisa A. Turner (2014)Research Methods, Design, and Analysis

Հոդվածներ

1. Vogt W. P. (2008) The Dictatorship of the Problem: Choosing Research Methods, Methodological Innovations Online
2. Carrie Williams (2007) Research Methods.JBER
3. Linda T Carr (1994). The strengths and weaknesses of quantitative and qualitative research: what method for nursing?
4. Hamza Alshenqeeti (2014) Interviewing as a Data Collection Method: A Critical Review
5. J. Beyers; C. Braun; D. Marshall; I. De Bruycker (2014). Let's talk! On the practice and method of interviewing policy experts. Interest Groups & Advocacy, 3(2), 174–187.
6. Pearce, L. D. (2012). Mixed Methods Inquiry in Sociology. American Behavioral Scientist, 56(6), 829–848.

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԷԹԻԿԱՆ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Հնարավոր են իրավիճակներ, երբ.

1. ելնելով հետազոտության նպատակներից՝ անհրաժեշտ է թաքցնել հետազոտող/ների ինքնությունը,
2. ելնելով հետազոտության արդյունքների յուրահատկությունից՝ անհրաժեշտ է գաղտնիություն պարունակող տեղեկատվություն տրամադրել իրավապահ մարմիններին,
3. հետազոտությունն իրականացվում է խոցելի խմբերի շրջանում,
4. հետազոտությունն իրականացվում է երեխաների/անչափահասների հետ:

Բոլոր այս դեպքերում խորհուրդ է տրվում.

1. Օգտվել մասնագիտական գրականությունից և կիրառական ձեռնարկներից, ուղեցույցներից. դրանցում արդեն առկա է բավականաչափ օգտակար տեղեկատվություն նմանատիպ իրավիճակներում ճշգրիտ որոշումներ կայացնելու համար:
2. Խորհրդակցել հետազոտողների համայնքի հետ. շատ հետազոտողներ նախկինում բախվել են նման երկընտրանքային իրավիճակների, և նրանց փորձը խիստ օգտակար կարող է լինել:
3. Խորհրդակցել տվյալ խնդրի հետ առնչվող ոլորտային կազմակերպությունների և փորձագետների հետ. նրանց ուղղորդումները և նախկինում ունեցած փորձը ևս կարող են օգնել լուծել երկընտրանքը:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՏԵՂԵԿԱՑՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՆՄՈՒՇ

Համաձայնության թերթիկում պետք է արտացոլված լինեն հարցվողի իրավունքների վերաբերյալ մի շարք կարևոր կետեր: Հետազոտության նպատակից կախված՝ թերթիկը կարող է ունենալ տարբեր բովանդակություն, սակայն կան որոշակի սկզբունքներ, որոնք հիմնականում ընդհանուր են բոլոր նմանատիպ համաձայնության թերթիկների միջև:

Ստորև ներկայացվում է տեղեկացված համաձայնության թերթիկի նմուշ:

Տեղեկացված համաձայնության թերթիկ

[Հետազոտության անվանում]

Ստորագրելով սույն համաձայնության թերթիկը՝ հաստատում եմ, որ.

1. Համաձայն եմ կամավոր կերպով մասնակցել այս հետազոտությանը:
2. Գիտակցում եմ, որ կարող եմ ցանկացած պահի ընդհատել իմ մասնակցությունը հետազոտությանը կամ հրաժարվել պատասխանել ցանկացած հարցի, առանց որևէ հետևանքների:
3. Ինձ հստակ կերպով բացատրվել է հետազոտության նպատակը և բնույթը, և ես հնարավորություն եմ ունեցել հետազոտության վերաբերյալ հարցեր տալու:
4. Հասկանում եմ, որ մասնակցությունս ենթադրում է, որ պատասխանելու եմ հարցազրույցի ընթացքում հետազոտողի կողմից տրված հարցերին:
5. Գիտակցում եմ, որ մասնակցությանս դիմաց որևէ պարգևատրում չի նախատեսվում:
6. Համաձայն եմ, որ հարցազրույցը ձայնագրվի:
7. Գիտակցում եմ, որ ցանկացած տեղեկատվություն, որը կհայտնեմ հարցազրույցի ընթացքում, լիովին գաղտնի կպահվի:
8. Հասկանում եմ, որ հետազոտության արդյունքների ներկայացման մեջ անանուն կպահվեն իմ և այն մարդկանց ինքնությունը, ում մասին ես կխոսեմ:
9. Հասկանում եմ, որ հարցազրույցի որոշ հատվածներ կարող են ուղիղ խոսքով անանուն մեջբերվել հետազոտության հաշվետվություններում:
10. Հասկանում եմ, որ իրավունք ունեմ հետազոտության հետ կապված հավելյալ բացատրությունների կամ տեղեկատվության նպատակով կապ հաստատել հետազոտության համակարգողների հետ:
11. Ինձ փոխանցվել է այս թերթիկի պատճենը:

[Հետազոտողի պաշտոն, աշխատավայր, էլ.փոստ, հեռախոսահամար]

Մասնակցի ստորագրություն

_____

Ամսաթիվ _____

Հետազոտողի ստորագրություն

_____

Ամսաթիվ _____

SOCIES

ՍՈՑԻԵՍ փորձագիտական կենտրոն

Երևան, 2021